

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Զատկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ Եկեղեցւոյ Սրբազան Պատերազմի յղուած են հետեւեալ շնորհաւարական հեռագիրները. —

Երուսաղէմ, 11 Ապրիլ 1979

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սըրբութեան մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան և Սաղիմահայ համայնքին ամենասրտագին շնորհաւարութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և երջանկութիւն, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ բարգաւաճում:

Եղիշէ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 10 Ապրիլ 1979

Նորին Սրբութիւն

Յովհաննէս - Պօղոս Բ. Պապ

Վատիկան

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սըրբութեան մեր յարգալից շնորհաւարութիւնները, մաղթելով Ձեզ առողջութիւն և կար տարիներ, և կատարեալ յաջողութիւն՝ Ձեր մեծ իաւունքուն:

Եղիշէ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 10 Ապրիլ 1979

Ն. Ամենապատուութիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկուա

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սըրբութեան մեր սրտագին շնորհաւարութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն, ուրախ օրեր և արեւշատութիւն:

Եղիշէ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● ԵՂ. 1 Մարտ. — Ս. Վարդանանց զօրավարաց մեռող (Յիւստակ մեռնող Է. Տօն ձգգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուցող, ըստ սովորութեան, ժառանգ-վարժարանի Փոխ-Տեսուչը՝ Հոգչ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան, որ և Սուրբ Հաղորդութիւն տուաւ վարժարանի ուսանողութեան: Հայր մերէն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա.ի անուան տօնին առթիւ, իսկ Ս. Պատարագէն ետք՝ հոգեհանգստեան պաշտօն, որոնց նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Ուր. 2 Մարտ. — Իրաւական սովորութեան համաձայն, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանէի եկեղեցւոյն մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արղ. Պալեան: Ապա Միարանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորոց Գերշ. Եպիսկոպոսէն: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Եր. 3 Մարտ. — Կ. Պոլսոյ Ս. Ժնզղոյն (ՃՏԻ): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Մանուէլ Արեղայ:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին վարագուրուեցան Մայր Տաճարի սեղաններն ու գլխաւոր սրբանկարները:

● Կիր. 4 Մարտ. — Բուն Բարեկենդան: Փակ-եալ-խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Համարձուս Արղ. Քէշիշեան:

● Դշ. 7 Մարտ. — Սկիզբն կարգաց Մեծի պահոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Արեւադալի առաջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ Թաղապահանի առաջին ժամերգութիւնը:

● Ուր. 9 Մարտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցւոյ (Ս. Աթոռոյս Զեռագրատան) մէջ, նախագահութեամբ Զեռագրատան Տեսուչ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեանի:

● Եր. 10 Մարտ. — Ս. Թեղդորոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայրիկ Արղ. Գայաճեան:

— Վաղուան Արտաքսման Կիրակիի առթիւ, կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միարանութիւնը «Նրաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատրան մէջ: Ապա կատար-

ուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Սեան Վրդ.:

● Կիր. 11 Մարտ. — Արտաօմն: Գիշերա-յին և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծանշան թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանաւորելոյն շուրջ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Դշ. 13 Մարտ. — Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուած Մեծ Պահոց առաջին Հսկումին նախագահեց և ապաշխարութեան կարեւորութեան մասին քարոզեց նոյն վանքի Տեսուչ՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

● ԵՂ. 15 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց և Անպտուղ Թղենի աւետարանական առակը մեկնաբանելով քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

● Եր. 17 Մարտ. — Ս. Կիրիլ երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրիլի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 18 Մարտ. — Անառակին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, մեկնաբանելով Անառակի աւետարանական առակը:

● Դշ. 20 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, շեշտելով աղօթքի դերն ու կարեւորութիւնը մեր կեանքին մէջ:

● ԵՂ. 22 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ քարոզեց Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, շեշտելով ինքնաքննութեան դերն ու կարեւորութիւնը մեր կեանքին մէջ:

● Եր. 24 Մարտ. — Ս. Յովնանու երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արղ. Պալեան:

● Կիր. 25 Մարտ. — ՏՏԵՍԻՆ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

— Ժամը 10.30ին, քաղաքիս արեւմտեան բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ փակեալ-խորանի Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, մեկնաբանելով Տնտեսի աւետարանական առակը:

● Գշ. 27 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, ողորմածութեան առաքելութեան մասին:

● Եշ. 29 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Գաղար նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Ուր. 30 Մարտ. — Վաղուան քառասուն մանկանց տօնին առթիւ, կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ թաղապետան ժամերգութիւն, իսկ դիշերը՝ Հսկում, ուր իր անդրանիկ քարոզը խօսեցաւ Հոգչ. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան, սրբութեան գաղափարին շուրջ: Այս տարի եւ ժողովուրդը իր բարեպաշտական զգացումները արտայայտած էր սրբոց նկարին առջեւ կառուցուած սեղանին դիմաց մամուլառութեամբ և ձէթի նուրբարեութեամբ:

● Եր. 31 Մարտ. — Ս. Բառասուն մանկանց Սերասիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Վերաբերումը կատարուեցաւ 40 մանկանց նկարին առջեւ շինուած սեղանին վրայէն, որուն դիմաց, կաթնայի մը մէջ, կը պլլւային 40 գոյնզգոյն կանթեղներ:

— Վաղուան Դատաւորի Կիրակիի առթիւ, կէսօրէ ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորուով մուտք գործեց Ս. Գարութեան Տաճար, ուր, Ս. Գերեզմանի և Խաչգիւտի աշրին ուխտերէն ետք, վերջնայ կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արքեպս:

● Կիր. 1 Ապրիլ. — Գրաստօրին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և նախագահեց նոյնին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանգէս թափօրին:

● Գշ. 3 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ իր առաջին քարոզը խօսեցաւ Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան, Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած կորսուած ոչխարի առակի մասին:

● Եշ. 5 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Գաղար քարոզեց Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, կեղծաւորութեան մոլութեան մասին:

● Ուր. 6 Ապրիլ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

● Եր. 7 Ապրիլ. — Ս. Զօհմ մերջ Գր. Լուսաւորիչին (Մոսէի ի Վիւսայ): Առաւօտեան ժամերգութեանէն ետք, ըստ սովորութեան, Ս. Լուսաւորիչի մասունքը թափօրով փոխադրուեցաւ:

Ապա խորան, ձեռամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ: Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիթնեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ:

— Իրիկուան ժամը 7ին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեղեցէի և Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ժամերգութեանց աւարտին՝ Ս. Պատարագ մատուցուեցաւ: Համբարձման մատարան մէջ: Պատարագից, ըստ սովորութեան, Սրբավայրին Տնտուշը՝ Հոգչ. Տ. Հայրիկ Արդ. Գալայճեան: Գիշերուան ժամը 11ին, Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք:

● Կիր. 8 Ապրիլ. — Գալսեան: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր դարձեալ ինքնաշարժերով բարձրացան Զիթնեաց լեռ, ուր շնորհաւորուով Համբարձման սրբավայր կատարուած հանդիսաւոր մուտքէն ետք, Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան եպիսկոպոսական զգեստաւորմամբ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց մեր վրանամատարան մէջ:

● Գշ. 10 Ապրիլ. — Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ վերջին Հսկումին նախագահեց և ինքնաշնորհութեան կարեւորութեան շուրջ քարոզեց նոյն վանքի Տնտուշը՝ Հոգչ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

● Եշ. 12 Ապրիլ. — Ս. Գաղարեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած Մեծ Պահօց վերջին Հսկումին նախագահեց և մեղքի մասին քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

● Ուր. 13 Ապրիլ. — Խ. օր մեծ պահօց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւադարի վերջին ժամերգութիւնը, իսկ Կ. Վ. թաղապետանի վերջին ժամերգութիւնը:

● Եր. 14 Ապրիլ. — Յիւսէպի յարութեան Ղազար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ոսկի Արդ. Որգիլեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Մաղկադարդի տօնին առթիւ, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորուով մուտք գործեց Ս. Գարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատարան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան:

● **Գիր. 15 Ապրիլ.** — Ծաղկազարդ: Գիշերա-
յին և առաւօտեան ժամերգութիւնները պաշ-
տուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի
Ս. Յարութիւն, մեր վերնամասերն մէջ: Ժա-
մարարն էր Նոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զրզան-
եան: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկ-
եանի գլխաւորութեամբ, կատարուեցաւ եռա-
դարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գե-
րեղմանին և Պատանաստեղտոյն շուրջ: Թափօ-
րականք ի ձեռնին ունէին ձիթենեաց և արմա-
ւենեաց օտտեր, իսկ մեր թափօրին կը հետե-
ւէին Ղպտոց և Ասորոց թափօրները: Երկրորդ
թափօրի ընթացքին կատարուեցաւ Անդառ-
տան: 7 ժամեր տեղ ժառանգութեամբ այս արա-
րողութիւնները աւարտեցան ժամը 1ին: Քիչ
ետք, Միաբանութիւնը ճամբայ ելաւ դէպի
Մայրամբանք և Հայոց Թաղի մուտքէն՝ Որ
վրանհուրդ քաղաքատեան շարականը երգե-
լով բարձրացաւ Պատրիարքարան:

— **Կէսօրէ ետք,** չքեղօրէն դարգարուած
Մայր Տաճարին մէջ կատարուեցան Անդառ-
տան, տունին յատուկ հնչողութիւն մեղեդինե-
րով ընդմիջուած ժամերգութիւն և Դոնրա-
ցէքի խորհրդաւոր արարողութիւն, բոլորն ալ
նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. ի
Նոգշ. Տ. Սեան Վրդ. Աւագ Սեղանի ընթացքին
կարդաց վարդապետներու բացման մասնակցող
հաւատացեալներու անուանացանկը և կոշ-
րքաւ ներկաներուն որ իրենց յումաներով
նպատակաւ Ազունիէի Ազգ. Բաժարանին: Այդ
նպատակաւ պնակներ զետեղուած էին եկե-
ղեցոյ զոյգ մուտքերուն:

● **Դշ. 17 Ապրիլ.** — Աւագ Երեմեայի: Ս.
Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան բա-
կին վրայ բացուող Ս. Յովհ. Աւետարանի
մատարան մէջ: Ժամարարն էր Նոգշ. Տ. Մա-
նուէլ Արդ. Երկաթեան: Ս. Թ. Վարժարանի
աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:
Ապա կատարուեցաւ ախտաւորաց թափօր
Տաճարէն ներս: Թափօրապետն էր Նոգշ. Տ.
Հայրիկ Արդ. Գայայճեան:

● **Եշ. 19 Ապրիլ.** — Աւագ Հիմեայի (Յիւս-
տակ Ընթաց): Առաւօտեան ժամերգութեան ա-
ւարտին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ
կատարուեցաւ Վարդ Ապաշխարողաց:

— **Կարճ զաղարէ մը ետք,** Աւագ Սեղանին
վրայ մատուցուեցաւ հանգիստաւոր Ս. Պատա-
րագ: Պատարագիւն էր Գերշ. Տ. Շահէ Արքե-
պիսկոպոս, որ կատարեց նաև ընթերցումը
Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ծա-
ռին: Բաւական թիւով ժողովուրդ ստացաւ
Ս. Հաղորդութիւն:

— **Կէսօրէ ետք,** Ամեն. Ս. Պատրիարք Հօր
նախագահութեամբ, Մայր Տաճարին մէջ կա-
տարուեցաւ Ուտնալուայի հոգեգրաւ արարո-
ղութիւնը: Եկեղեցոյ զոյգ դասերը լեցուն
էին օտար հիւրերով, որոնց շարքին՝ Երու-
սաղէմի Քաղաքապետ Ն. Վեհ. Թէաի Բօլ-
լէք, Նահանգային Կառավարիչի փոխանորդ

Տիար Տափիտ Խէն, ինչպէս նաև, ի բացակա-
յութեան Անկիլիքան Արքեպս. ին, իր փոխա-
նորդը, որ զգեստաւորուելով Անգլիէն լեզ-
ուով Աւետարան կարդաց Աւագ Սեղանի ընթաց:

— **Ժամը 4:30ին,** փոքր թափօր մը, գլխա-
ւորութեամբ Նոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զրզ-
անեանի, մեկնեցաւ Ս. Հրեշտակապետաց ե-
կեղեցին: Զարչարանաց խորանին առջև կա-
տարուած Ս. Աւետարանի ընթերցումէ ետք,
թափօրը յառաջացաւ դէպի եկեղեցոյ գաւ-
թին մէջ դանուող Ս. Զիթենի ծառը, որուն
դիմաց կատարուած արարողութիւնէն ետք
Հոգեշնորհ Հայրը խօսք առնելով՝ պարզեց
հանգամանքները մեր Տիրոջ դատաւարու-
թեան, տալով նաև պատմական նշան վան-
քին: Հոգշ. Հայրը խօսեցաւ նաև Ս. Փրկչի
վանուց գաւթին մէջ, ուր մեկնեցան թափօ-
րականք ապա, շարականներու երգեցողու-
թեամբ: Ըրաւ նաև հակիրճ պատմական հա-
յապատկան և քրիստոնէական տեսակէտէ մեծ
կարեւորութիւն ունեցող այս Սրբավայրին:

— **Գիշերասկիզբին,** Մայր Տաճարին մէջ
պաշտուեցաւ Վարդ Խաւարման, տխրազգե-
ցիկ խորհրդաւորութեամբ: Յուզիչ էր պահը
երբ համատարած մաւթին մէջ խօսք առաւ
Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս, կուռ քարոզով
մը վեր հանելով չլացի գիշերուան բարեբար-
ու փրկարար նշանակութիւնը:

● **Ուր. 20 Ապրիլ.** — Աւագ Ուրբաթ (Յիւստակ
Խաչելութեան) և Աւետմն Ս. Ասուածածնի: Կէ-
սօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի վեր-
նատան մեր մատարան մէջ կատարուեցաւ
Վարդ Խաչելութեան: Հանդիսապետն էր Գե-
րաշնորհ Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

— **Ժամը 4ին,** Ս. Յակոբեանց Մայր Տաճա-
րին մէջ կատարուեցաւ մեծահանգէս Վարդ
Թաղման Քրիստոսի, նախագահութեամբ Ամե-
նապատիւ Ս. Պատրիարք Հօր:

● **Եր. 21 Ապրիլ.** — Աւագ Շաբաթ (Ճաղալոյց
Ս. Զատիկ): Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ
պաշտուած ժամերգութիւնէն քիչ ետք, ժամը
8ին, փոքր թափօր մը մեկնեցաւ Ս. Յարու-
թեան Տաճար, կատարելու համար Տաճարի
գրան բացման աւանդական ձեւակերպութիւ-
նը, բանալին առնուելով Աւագ Թարգման
Նոգշ. Տ. Ասպետ Արդ. Պաղեանի ձեռքէն:

— **Ժամը 10:15ին,** Ամեն. Ս. Պատրիարք
Հօր գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանու-
թիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս.
Գերեղմանին շուրջ մէկ անգամ դառնալէ ետք
թափօրը ուղղուեցաւ Տաճարի մեր Տեաչարա-
նը: Արեւելեան եկեղեցիներու համայնքներէն
և Կիպրոսէն ու Յունաստանէն ժամանած Յոյն
ուխտաւորներու բազմութեամբ լեցուն էին
Տաճարին գրեթէ բոլոր մասերը: Ժամը 11ին
կատարուեցաւ կնքումը Ս. Գերեղմանի գրան,
ի ներկայութեան պետական գէմբերու: Կէս-
րին՝ Յունաց Միաբանութիւնը մատք գործեց

Տաճար, ու կէս ժամ շանցած իրենց մեծահանգէս թափօրը սկսաւ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. ձերմանոս Արքեպսկին, որ եռօգարծ թափօրի աւարտին, մեր Լուսահանին՝ Նոգշ. Տ. Սեան Վրդ. Դարիպեանի հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ նինգ վայրկեան ետք դուրս պիտի դար նուիրական լոյսը, կարելի փութով փոխանցուելով Ս. Գերեզմանի շրջափակին վրայ հայոց մեր վերնամատարան պատշգամին մէջ իր տեղը գրաւած Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ անով կ'օրհնէ վարը խոնուած ծովածաւալ բաղնիքները: Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը, որ Տաճարին հայկական և յունական բոլոր զանգերուն և կոչնակներուն զուարթ զօղանջներուն բնղմէջէն երիցս շրջանը կ'ընէ Ս. Գերեզմանին, երգելով Յարութեան շարականներ: Թափօրը կը գլխաւորէր, բոս ստիպութեան, Լուսահան շայրսորբը, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, իսկ Դպրաներն և Ասորիներ թափօր կողմած կը հետեւէին մեր թափօրին: Ժամը 2.30ին, Միաբանութիւնը ճամբայ ելաւ զէպի Մայրավանք: ճամբու կէսին, Դաւթի բերդին դիմաց, Պատրիարքն ու Լուսահանը զգեստաւորուեցան և առաջնորդութեամբ Հ. Մ. Բ. Մ. ի, Հ. Ե. Մ. ի և «Արաքսի» սկսուածներուն և արհնայններուն, թափօրը յառաջացաւ, «Քրիստոս յարեաւ» և «Այսօր յարեաւ» շարականները երգելով: Սրբ. Պատրիարք Հօր կողմէ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուած Ս. Աւետարանի ընթերցումը ժամուան մը համար փակեց փառայեղ այս հանգիստութիւնը:

— Ժամը 4ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ ձրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին, Քրիստոսի Յարութեան աւետիսով բացուեցաւ վարագոյրը Աւագ Սեղանին և սկսաւ իրիկեանդէմի խորհրդաւոր Ս. Պատարագը՝ զոր մատոյց Նոգշ. Տ. Հայրիկ Արդ. Դալայեան: Յետոյ կատարուեցաւ Ս. Զատիկի նախատունակ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. ի: Արարողութեան աւարտին, «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ Միաբան Հայրեր և դպիրներ զգեստաւորեալ բարձրացան Սեղանատուն՝ ընթերիքի:

● Կիր. 22 Ապրիլ. — ՁԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ: Կէս գիշերէն ետք ժամը 1-30ին, Մայրավանքի մեծ դահլը ոտքի է հանած արգէն Միաբանութիւն և ժողովուրդ: Կէս ժամ ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր կը մեկնին Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի վրայ կատարուած ուխտէն ետք, Տաճարի վերնատան մեր մատարան մէջ պաշտուեցաւ գիշերային ժամերգութիւնը և մաս մը առաւօտեան ժամերգութենէն մինչև «Նարց», երբ Միաբանութիւնը իջաւ շրջափակը Ս. Գերեզմանին, շարունակելու համար ժամերգութիւնը, երիցս դարձեալ Սրբավայրին շուրջ: Ս. Գերեզմանի

զբան իւղարհերից Աւետարանի ընթերցման աւարտին կատարուեցաւ «Անդաստան» ու երգուեցաւ «Պաշի քո Քրիստոս»: Մեր թափօրին կը հետեւէին Դպրոց և Ասորոց թափօրները: Մէկ ժամուան զաղարէ ետք, Գերշ. Հանգիստպետ Սրբազանը մատոյց օրուան հանգիստաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Կենսատու Գերեզմանին վրայ և քարոզից օրուան մեծ տօնին շուրջ: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ էր Ս. Պատարագին, որ ձայնասփռուեցաւ իսրայէլեան առաօկայանէն: Արարողութիւնները փակուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ: Վանք դարձին՝ Հայոց Թաղի մուտքէն, «Այսօր յարեաւ» շարականը երգելով Միաբանութիւնը յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան, ուր ն. Ամենապատուութիւնը Յարութեան աւետիսով օրհնեց ու արձակեց ամէնքը:

— Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատիկեան մեծ Անդաստանը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Բշ. 23 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատիկի (Յիւսասկ մեռելոց): Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մատոյց օրուան հանգիստաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և ապա, Կենաց Փայտի մասունքն ի ձեռին և ամպնոմանի ներքե, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռօգարծ մեծահանգէս թափօրին, որուն ընթացքին վարդապետներ ի ձեռին ունէին սրբոց մասունքներ: Յետոյ, «Այսօր յարեաւ» շարականը երգելով, ամէնքը բարձրացան Պատրիարքարան, ուր նորին Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

● Գշ. 24 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատիկի և Յուսասկի նախասկից: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Դիսպղի մատարան մէջ: Ժամաբարն էր Նոգշ. Տ. Սեան Վրդ. Դարիպեան: Յետոյ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտամունք խնդրամատոյց ուխտաւորաց նշնեցեալներու և Ապրիլեան զոհերու հոգիներուն համար:

● Ուր. 27 Ապրիլ. — Ս. Կոյսի Աւետման տօնը այս տարի զուգարկուած ըլլալով Աւագ Ուրբաթին, կարելի էր եղած կատարել: Առայդ, տօնախմբութիւնը վաղուան յետաձգուած ըլլալով, այսօր պաշտուեցաւ նախատունակը Ս. Յակոբ: Հանգիստպետ էր Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս:

● Շբ. 28 Ապրիլ. — Դիսասումն Ս. Յովհաննէս Կարապետի: Առաւօտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գիթեմանի ձորը ու «Հրաշափառ» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանգիստաւորապէս պատարագեց և «Ապաքէն դուք Տաճար Աստուծոյ կենդանւոյ էք» ընարանով աւուր պատշաճ քաբողեց Գերշ. Հանգիստպետ Սրբազանը:

● **Կիր. 29 Ապրիլ.** — Նոր Կիւակի (Յիււակ բիւրաւոր հանասակացն մերոց յընթացս Ա. Համա- խառնային Պատեմագլխին): Մայր Տաճարի Աւագ Սե- ղանին միայն Ս. Պատարարք մատուցց, բոստ առ- լորութեան, Լուսանանք՝ Հոգւ. Տ. Սեան Վրդ. Դարկեան: Քարոզեց Գերշ. Տ. Շանէ Արքեպս. Աճէմեան, «Իսկ արդ որք ննջեցին ի Քրիստոս»՝ կորեա՞ն արդեօք» (Ա. Կորնթ., ԺԱ. 18) բնա- բանով և յայտնեց թէ մենք արդար դատ մը ունինք, որուն յաջողութեան և կորսուած մեր հոգեբու վերստացման համար պէտք ու- նինք ազգային առողջ գիտակցութեան ու միակամ գործակցութեան: Ապա, Գերշ. Սրբ- բազան Հօր գլխաւորութեամբ, հանգստեան շարականներու երգեցողութեամբ և Հայ արի- ներու բոլոր խումբերուն առաջնորդութեամբ ու ծագեցեցողութեամբ, Միաբանութիւն և Ժո- ղովորդ ուղղութեան Ս. Փրկչի ազգային գե- բեղմանատունը, ուր Արարչի նահատակաց յուշարձանին շուրջ կատարուած հանգստեան պաշտամունքէն ետք խօսք առաւ Հայ Օգնու- թեան Միութեան Ատենապետուհին՝ Տի. Վարդ- ճուհի Օճանէսեան, յայտնելով թէ մեր ազ- գային արժէքներուն ամբողջն փարած մնալով է միայն որ իրագործած պիտի ըլլանք պատ- դամբ մեր նահատակներուն: Յետոյ բոլորն ալ դարձան Հ. Մ. Ը. Միութեան ակումբը՝ հոգե- սուրճ առնելու:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● **Եշ. 8 Մարտ.** — Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգւ. Տ. Բարդէ Արդ. Անուշ- եան մեկնեցաւ Տիբթոյթ, Միացեալ Նահանգ- ներ, իբր Հոգեւոր Հովիւ:

● **Կիր. 11 Մարտ.** — Գիշերուան ժամը 8ին, Քնէսէթի (Խորաշէլի Խորհրդարան) մէջ, Ս. Եր- կիր այցելող Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահ ձիմի Քարթըրի ի պատիւ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Գիւսանապետ Գերշ. Տ. Շանէ Արքեպս. Աճէմեան:

● **Կիր. 25 Մարտ.** — Երեկոյեան, Յունաս- տանի Անկախութեան տօնին առթիւ, Հելլէն Հիւպատոսին կողմէ, Հիլթօն պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէան, Հոգւ. Տ. Ասպետ Արդ. Պալեան և Տիար Գ. Հինգլիան:

● **Եշ. 29 Մարտ.** — Երեկոյեան, ընդառա- ջելով Քնէսէթի Նախագահ Իցնաք Շամիրի հրաւերին, Գերշ. Տ. Շանէ Արքեպս. ներկայ եղաւ Վարչապետ Մէնասիսի Պէկիւնի ի պատիւ:

և անոր եղիպոսի Նախագահ Անուար Սա- տաթի հետ Ամերիկայի մէջ խաղաղութեան դաշնագրի ստորագրութենէն զարժին առթիւ տրուած ճաշկերոյթին:

● **Եր. 7 Ապրիլ.** — Կէսօրէ առաջ, Հապէշ համայնքի նոր եպիսկոպոս Ապպա Մաթիա ժամանեց Ս. Քաղաք: Մեր կողմէ, Եւֆայի դրան մօտ, Գերապատիւ Սրբազանք գիւմաւ- բելու գացած էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գա- բրիէանը, ընկերակցութեամբ Հոգւ. Հայրերու՝ որոնք ապա առաջնորդեցին Սրբազանք Սուրբ Յարութեան Տաճար, ուր պատուասիրութիւն կատարուեցաւ մեր Տեսչարանին մէջ:

● **Եշ. 12 Ապրիլ.** — Կէսօրէ առաջ, Հապէ- շաց նոր Եպիսկոպոսը իր հետեւորդներով իր առաջին այցը տուաւ Ս. Պատրիարք Հօր:

● **Գշ. 17 Ապրիլ.** — Եւրոպացւոց Ս. Զատիկի տօնին առթիւ, Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատ- րիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնոր- հաւորական այցելութեան գնաց Յրանչիսկե- անց Գերշ. Կիւսթոսին, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին և Պապական Նուիրակին: Գերշ. Տ. Շանէ Արքեպս. այցելեց Անկիլքան Գերշ. Արքեպս.ին, իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկ., խումբ մը վարդապետներով, Կաթոլիկ և Բա- զաքական փոքր յարանաւանութեանց Մեծա- տրներուն:

● **Բշ. 23 Ապրիլ.** — Մեր Ս. Զատիկի տօնին առթիւ, Կէսօրէ ետք, Լատինաց Պատրիարքը շնորհաւորութեան եկաւ Պատրիարքարան:

● **Գշ. 24 Ապրիլ.** — Նոյն առթիւ, Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ամբողջ Միաբանութեամբ, շնորհաւորական այցելու- թեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին, որմէ ետք Պատրիարքարան վերադառնալով, ընդունեց շնորհաւորութիւնը Յրանչիսկեանց Կիւսթոսին, Պապական Նուիրակին, Անկիլքան Արքեպս.ին, Ասորոց և Հապէշաց Եպիսկոպոս- ներուն, Յոյն-Կաթոլիկներուն, Հայ-Կաթոլիկ- ներուն, Մարոնիներուն և Ռուսաց վանքի Մե- ծաւորներուն, Լուսերականներուն և Արաբ- Լուսերականներուն երէցներուն, ինչպէս նաև Հիւպատոսական Մարմինն: — Հոգւ. Տ. Անու- շաւան Վրդ. և Հոգւ. Հայրեր այցելութեան գացին Ասորոց և Հապէշաց Եպիսկոպոսներուն:

● **Գշ. 25 Ապրիլ.** — Նոյն առթիւ, Կէսօրէ առաջ, շնորհաւորութեան եկաւ Յունաց Պատ- րիարքը՝ հանդերձ Միաբանութեամբ, ինչպէս նաև Քաղաքապետն ու Ոստիկանապետը:

● **Բշ. 31 Ապրիլ.** — Երեկոյեան, Հոլանտա- կան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, ճուլիանա- Թագուհւոյ ծննդեան 70-ամեակի առթիւ, Հիւ- պատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկ. և Աւագ Թարգման Հոգւ. Տ. Ասպետ Արեղայ: